

Ա.Թ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊՐՈՒԼԵՄԱՅԻՆ ՌԻՍՈՒՑՈՒՄ. ՆՈՐ, ԹԵ՛ ՆՈՐԱՑՎԱԾ ՄԵԹՈԴ

Ներկայացվում է պրոբլեմային ուսուցման էությունը, նրա կարևորությունը ժամանակակից կրթական համակարգում: Հիմնավորվում է դասավանդման ավանդական մեթոդների մեջ ու դրանց զուգահեռ նրա շարունակաբար գործածությունը՝ իր նոր բաղադրատարրերով:

Առանցքային բառեր. պրոբլեմային ուսուցում, ինքնուսուցում, նպատակադիր և նպատակահարույց ուսուցում:

Ներածություն. Քսանմեկերորդ դարը նշանավորվեց տեղեկատվական հսկայական նոր հոսքով: Այսօր կյանքի բոլոր բնագավառների այնպիսի փոփոխությունների և նորացումների ժամանակաշրջան է, որոնք բարդ են, ոչ միանշանակ և շատ դեպքերում՝ հակասական: Տեղաշարժեր են նկատվում մարդու կյանքի թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր ոլորտներում: Գիտելիքի տարածական ընդարձակումը, դրա ծավալը, բազմա- և տարատեսակությունն ակնառու դարձրին մարդու կողմից ամեն ինչ իմանալու ու կարողանալու անհնարինությունը, ինչի արդյունքում առաջնային դարձան սովորող անհատի կողմից տեղեկույթը սեփական ուժերով փնտրել-գտնելու, կուտակելու, մշակելու, վերլուծելու, դրանք յուրացնելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունները: Սա հիմնահարց է, որն ուսումնասիրվում է ամբողջ աշխարհում: Ժամանակակից կրթության նպատակն է դարձել մտածող անհատի ձևավորումը, որն ի վիճակի է արագ արձագանքելու հասարակական կյանքում կատարվող տարաբնույթ փոփոխություններին, կայացնելու արագ որոշումներ և իրականացնելու դրանք:

Հիմնահարցի ուսումնասիրությունը. Հարցը, թե պրոբլեմային ուսուցումը մեթո՞դ է արդյոք, և կամ դիդակտիկայի ո՞ր կատեգորիային պետք է այն դասել, շարունակաբար հետաքրքրել ու հետաքրքրում է ոլորտի մասնագետներին:

Ըստ Տ. Կուդրյավցևի, Ա. Մատյուշկինի, Ի. Լերների՝ սա դիդակտիկական սկզբունք է, քանի որ առաջադրանքը կատարելիս սովորողի կողմից կորդինացվում են ակտիվության, հաջորդականության, գիտականության սկզբունքները [1], [2], [3]:

Ըստ Վ. Օկոնի՝ պրոբլեմային ուսուցումը մեթոդ է, Մ. Մախմուտովը և այլք առաջարկում են այն համարել մեթոդների համակարգ, քանի որ համատեղում,

համախմբում է տարբեր մեթոդներ [4], [5]: Իսկ Մ. Սկատսինը և ուրիշներ այն դիտում են որպես ուսուցման նոր տիպ [6]:

Ասվածն արդեն իսկ վկայում է, որ պրոբլեմային ուսուցումն ունի բարդ կառուցվածք ու բովանդակություն, տիպական որոշակի առանձնահատկություններ, այսինքն՝ այն մեկտեղում է ուսուցման զանազան սկզբունքներ, մեթոդներ, հնարներ: Ուստի այն կարելի է համարել այդ ամենը համախմբող, միմյանց օժանդակող դիդակտիկական նոր համակարգ:

Նորարար, SpaceX ընկերության ղեկավար Իլոն Մասկը փորձարարական նպատակներով ստեղծել է սեփական դպրոց, որտեղ սովորում են իր և իր աշխատակիցների երեխաները: Դպրոցը չունի տարաբաժանված դասարաններ, քանի որ կրթությունն իրականացվում է բոլորի համար համաժամանակյա ձևով: Դասավանդման այս ձևը, ասես, հիշեցնում է տերթոդիկյան դպրոցը, սակայն գիտելիքի մատուցման բոլորովին այլ սկզբունքներով ու որակներով: Փորձի հեղինակն առաջ է մղում ուսումնառողի ոչ թե տարիքային, այլ հետաքրքրությունների կարևորությունը, ուստի ուսուցումն անհրաժեշտ է կազմակերպել՝ հաշվի առնելով նրա կարողությունները և վերաբերմունքը ուսումնասիրվող դասավանդվող առարկայի նկատմամբ: Այստեղ, բնականաբար, բացառվում է բոլորի կողմից միևնույն տնային առաջադրանքի կատարման հնարավորությունը, քանի որ սովորողը տանն անելու է այն, ինչ իրեն է մատչելի կամ հետաքրքիր: Փորձերի նպատակը մեկն է՝ խթանել ինքնուրույն, անհատական աշխատանքը: Այսինքն՝ դասավանդման ժամանակակից համարվող մեթոդների մեջ տեսանելի են ավանդական մեթոդների՝ այլ նպատակներ հետապնդող բաղադրիչներ:

Այն հարցին, թե նման կրթությունը կարո՞ղ է արդյոք սովորողների մեջ զարգացնել ակնկալվող կարողություններն ու հմտությունները, տրվել է դրական պատասխան՝ հիշեցնելով, որ բոլոր մանկավարժներն էլ աշխատանքի ընթացքում որպես առաջին դժվարություն մատնանշում են իրար կողքի նստած, սակայն գիտելիքների տարբեր մակարդակներ ունեցող սովորողների առկայությունը, նրանց հետ միևնույն ծրագրով, միևնույն մեթոդաբանությամբ պարապելու հիմնախնդիրը:

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Էրիկ Մազուրն էլ առաջարկում է, այսպես կոչված, «շրջված դասասենյակը»՝ դասավանդողի բոլորովին նոր դերով: Սովորողը տանն ինքնուրույն կարդում է, ծանոթանում որոշակի փաստերի, նշում իր կողմից չպարզաբանված կամ իրեն հետաքրքրող հարցերը, որոնք հետո բացատրվում և կանոնակարգում են դասավանդողի կողմից:

Վերջերս Մելքունի համալսարանի նախաձեռնությամբ ամբողջությամբ փոխվեցին մանկավարժական կրթության ծրագրերը. դրանք կառուցվեցին միայն գիտական փաստերի ու քննադատական մտածողության հենքով, սակայն չհաջողվեց փոխել դրա նկատմամբ դասավանդվող առարկային հատուկ (դիսցիպլինար) մոտեցումները՝ դրան դեռևս պատրաստ դասավանդողներ չունենալու պատճառով: Քննությունները, պրակտիկ, լաբորատոր աշխատանքները թողնվեցին ինչպես որ կային, սակայն փոփոխվեց գնահատման բովանդակությունը:

Կատարելագործման փուլում են գիտելիքները ստուգող թեստերը, որոնք կպահանջեն ոչ թե գտնել իքսը հավասարման մեջ, հիշել պատմական դեպքերն ու կոնկրետ տարեթվերը, այլ միմյանց հետ կապված համակարգիչներով կատարել տարաբնույթ առաջադրանքներ, իսկ համակարգիչը հընթացս կգրանցի այն ամենը, ինչ արվում և ասվում է: Այսինքն՝ կստուգվի սովորողի ոչ թե փաստերը մտապահելու, հիշելու, այլ ինքնուրույն սովորելու, ինքնուրույն մտածելու կարողությունը: Ստուգող խումբը կգնահատի ուսումնառողի՝ հաղորդակցվելու, ստեղծագործելու կարողությունները, կրեատիվ ու վերլուծական մտածողությունը և այլն:

Պրոբլեմային ուսուցման հիմնախնդիրները ժամանակին (դեռևս 20-րդ դարի 70-ական թվականներից) քննվել են նաև ռուս և հայ մանկավարժների ու հոգեբանների կողմից [7], [8], [9], [10], [11], [12], ներկայացվել է ուսուցման այս մեթոդի էությունը, գնահատվել են դրա առավելությունները, այսինքն՝ այն միշտ եղել է դասավանդման ավանդական մեթոդների կարևոր ու անհրաժեշտ բաղադրիչը:

Հիմնահարցի էությունը. Պրոբլեմային ուսուցման տարրեր, անշուշտ, կային դեռևս միջին դարերի «դիսպուտներում», Քվենտալիոսի դրույթներում: Ուսուցման այս ձևի նախատիպը տեսնում ենք նաև ուսուցման սկրատյան մեթոդում (սկրատյան ինդուկցիա և սկրատյան հեգնանք), երբ զրուցակիցը, հատուկ հարցերի ու դատողությունների միջոցով, մասնակից էր դառնում գիտելիքի ծնունդին՝ միաժամանակ երկուստեք ընդունելով քննարկվող հարցի նկատմամբ կեղծ անգիտության, չիմացության դիրքը: Այսպիսի զրույցը հետաքրքիր էր և հետապնդում էր ոչ միայն բազմիմացությունն ապահովելու, այլև մտածողության ու որոնողական կարողությունները զարգացնելու նպատակ: Սակայն դրանք ժամանակին լայն տարածում չգտան և փոխարինվեցին առավել պահպանողական մեթոդներով:

Այսօր ակնբերանության (մարդուն արհեստավարժության բարձրագույն աստիճանին հասցնող տեխնոլոգիաների ստեղծման անհրաժեշտություն) հիմ-

քում հենց սուկրատյան մեթոդն է, որին ավելացվել է նոր բաղադրիչ՝ պրոբլեմային իրավիճակ (երբեմն՝ հոգեվիճակ) անվանումով: Վստահաբար կարող ենք ասել, որ ուսուցման ավանդական մեթոդները ևս ենթադրում էին պրոբլեմային հարցադրումներ և դրանց՝ համապատասխան եղանակներով լուծումներ[13], [14]:

Բուհական ուսուցման համակարգում ևս պրոբլեմային ուսուցումը դասական պատկերացմամբ նոր չէ: Այստեղ ցանկալի և անհրաժեշտ է պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, քանի որ ուսուցման և ինքնուսուցման գործընթացներում անհրաժեշտ են նոր երևույթների ու փաստերի տեսական բացատրություններ, երբ հաղորդված տեղեկույթը բավարար չէ, և այն պետք է փնտրել սեփական ուժերով, երբ օգնության պետք է գան միջառարկայական ու միջգիտական կապերը, նույնիսկ դրանց մեջ հանդիպող հակասությունները, երբ խնդիր է դրվում «հայտնագործելու» ինչ-որ նոր բան՝ երևույթ, հայեցակետ և այլն: Այս շարքում հատկապես կարևորվում են մոդելավորված և իմիտացիոն խաղերը, որոնք ևս նոր չեն (օրինակ՝ շախմատը կիրառվել է դեռևս 2000 տարի առաջ): Նման օրինակները բազում են և մշտապես կիրառելի:

Պրոբլեմային ուսուցման՝ որպես ստեղծագործական պրոցեսի էությունը նորի (նոր օբյեկտների, նոր գիտելիքների, նոր խնդիրների, դրանց լուծման նոր մեթոդների) բացահայտումն է՝ ոչ միօրինակ ճանապարհներով: Եթե վարժանքային առաջադրանքները սովորողներին տրվում են գիտելիքներն ամրապնդելու և հմտությունների ձեռքբերման նպատակով, ապա պրոբլեմային առաջադրանքները խնդիրների լուծման միշտ նորանոր ձևերի որոնում են ենթադրում ու պահանջում:

Պրոբլեմային ուսուցման ընթացքում գործադրվում են պրոբլեմային շարադրանքի, էվրիստիկական և հետազոտական մեթոդները:

Պրոբլեմային շարադրանքի դեպքում դասավանդողն ինքն է առաջադրում պրոբլեմը, ինքն էլ լուծում այն՝ միաժամանակ նշելով դրան հասնելու ուղիները: Սովորողները կարծիք են հայտնում, պատճառաբանում, կռահում, վիճաբանում, ձևակերպումներ կատարում, այսինքն՝ մտքով ներգրավվում են լուծումների որոնողական գործընթացում [6]:

Էվրիստիկական մեթոդի դեպքում իրականացվում է էվրիստիկական զրույց կամ լաբորատոր փորձ, որի ընթացքում խնդիրը բաժանվում է մանր մասերի, և յուրաքանչյուր հաջորդող հարցը քայլ առ քայլ մոտեցնում է խնդրի լուծմանը [8], [9]:

Հետազոտական մեթոդը ստեղծագործական գործունեության զարգացման ամենաարդյունավետ եղանակն է, երբ դիտարկվում են փաստերը, պարզաբանվում անհասկանալի երևույթները, կառուցվում է հետազոտության պլան,

առաջ է քաշվում վարկած, իսկ պրոբլեմի լուծումից հետո կատարվում է ստուգում, և արվում են գործնական եզրակացություններ: Սակայն պետք է նկատել, որ պրոբլեմային ուսուցման պրոցեսում կիրառվում է ոչ թե մեկ առանձին մեթոդ, այլ հաճախ դրանք զուգակցվում են, լրացնում և օժանդակում իրար:

Նորի որոնման ճանապահին այսօր փորձ է արվում պրոբլեմային ուսուցման ընթացքում միմյանցից տարանջատել պրոբլեմային համարվող պարզ հարցերը՝ դրանք անվանելով *նպատակադիր*, իսկ պրոբլեմային շղթայածև հարցեր և իրավիճակներ ստեղծող մեթոդները՝ ուսուցման եղանակների մի նոր, կարևոր ու արդյունավետ՝ *նպատակահարույց մակարդակ*, երբ սովորողն առերեսվում է իր իմացածին հակասող փաստերին, դատողություններին և փորձում է կա՛մ հերքել դրանց ճշմարիտ լինելը, կա՛մ նոր պատկերացում ձևավորել խնդրի մասին՝ հիմնավորելով ու ապացուցելով այն:

Բնությունն օժտել է մարդուն նոր բացահայտումներ կատարելու կարողությամբ. հայտնագործելու կարողությունը մարդու մեջ պատահական հատկություն չէ: Սակայն հարց է առաջանում՝ կրթության ի՞նչ ձևերով և միջոցներով կարելի է հասնել այդ անհրաժեշտ կարողության զարգացմանը [1]:

Այսօր ուսուցման հաղորդող-ցուցադրող մեթոդներն աստիճանաբար իրենց տեղը զիջում են սովորողների ինքնուրույն մտածողությունն ու ստեղծագործական գործունեությունն ակտիվացնող մեթոդներին, հետազոտական հմտությունների, «հայտնագործություններ» կատարելու կարողությունների արմատավորմանը, երբ առաջնային, խիստ կարևոր դեր հատկացվում է պրոբլեմային ուսուցմանը՝ այն դիտելով որպես նորի ուսուցման նոր ձև՝ իր հետևյալ հիմնական գործառույթներով.

1. սովորողների ստեղծագործական ինքնուրույնության զարգացում (ինքնուսուցում, ինքնակրթություն),
2. յուրացված գիտելիքների ու հմտությունների ստեղծագործական կիրառում,
3. ուսումնառողներին գիտության մեթոդներին մատչելի ձևով ծանոթացում,
4. սովորողների մեջ բարդ իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողությունների, սեփական դիրքորոշում ունենալու, զգացմունքների ու դրանց կուլտուրայի դաստիարակում:

Պրոբլեմային ուսուցման առանցքը պրոբլեմային իրավիճակների ստեղծումն է: Դա հոգեբանական այն վիճակն է, երբ սովորողը գործնական առաջադրանքը կատարելիս հայտնվում է դժվարին կացության մեջ՝ ունեցած գիտելիքները, կատարման եղանակներն անբավարար պատկերացնելու պատճառով, և ուղիներ է որոնում ստեղծված պրոբլեմային իրավիճակից դուրս գալու համար: Հենց սա է նոր մտքերի, հետաքրքրությունների արթնացման շարժիչ ուժը:

Հետևապես՝ պրոբլեմային իրավիճակ առաջանում է, երբ.

1. սովորողներին անձանոթ են առաջադրված խնդրի լուծման միջոցները,
2. սովորողները բախվում են նախօրոք ձեռք բերած գիտելիքները նոր պայմաններում կիրառելու անհրաժեշտությանը,
3. առկա է հակասություն խնդրի լուծման տեսական հնարավոր ճանապարհի և ընտրված միջոցի՝ գործնականում անհրաժեշտելի լինելու մեջ,
4. կա հակասություն պրակտիկայում եղած արդյունքի և սովորողների տեսական ոչ լիակատար գիտելիքների միջև [10], [11]:

Սակայն ուսումնական ոչ բոլոր նյութերն են պրոբլեմային ուսուցման ընտրության հնարավորություն տալիս, և ոչ բոլոր խնդիրներն ունեն որոնելի անհայտներ՝ ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր, որոնք շարունակաբար կարող են առաջացնել նոր, դժվարին պրոբլեմային իրավիճակներ:

Այստեղ կարևորը հետաքրքրելն է. թող սովորողը նոր հայտնագործություն չկատարի, բայց պատկերացնի և անցնի գիտնականի անցած ճանապարհով՝ վարկածի առաջադրումից մինչև ապացույցը կամ դրա ժխտումը: Ինչ է ձեռք բերում նա նման ուսուցման արդյունքում. հաղորդակցման անհրաժեշտության գիտակցում, ուսումնական խնդիրների լուծման ինքնուրույնություն, ուրիշի կարծիքի գնահատում ու հարգում, անհայտի նկատմամբ վախի զգացողության բացառում, ինքնակառավարում: Դրան համապատասխան՝ մարդու համարժեք ինքնագնահատականը, հավակնությունների համապատասխան մակարդակը, հաջողության մոտիվացիան, ինքնազարգացումը, նպատակաուղղվածությունը, նպատակասլացությունը, ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողությունը, աշխատասիրությունը, հաղորդակցվելու ունակությունը և այլն, այն կարևոր մարդկային ռեսուրսներն են, որոնք ուղղված են գլոբալ ճգնաժամային խնդիրները լուծելուն [14]: Ահա սրան պետք է ծառայի պրոբլեմային ուսուցումը՝ պատրաստելով բարձր պրոֆեսիոնալիզմով և ստեղծագործական հմտություններով օժտված մասնագետներ:

Պրոբլեմային ուսուցումը, դասավանդման այլ մեթոդների նման, ունի առավելություններ ու թերություններ: Ձևավորելով սովորողների ճանաչողական հետաքրքրությունները, զարգացնելով նրանց մտածելու, ուսումնասիրվող երևույթների, օրինաչափությունների և դրանց միջև նոր կապերի հայտնաբերման, գիտելիքի յուրացումը համոզմունքի փոխակերպելու կարողությունները, պրոբլեմային ուսուցումը պահանջում է ժամանակի ավելի մեծ ծախս՝ նույն ծավալով գիտելիքի յուրացման համար, քան ուսուցման մյուս տիպերը: Օրինակ՝ 100-շաբաթյա ուսուցման նյութը պրոբլեմային ուսուցման դեպքում պահանջում է 120 շաբաթ, իսկ դասավանդողն այս ուսուցման 1-շաբաթյա պարամունքներին նախապատրաստվելու համար ծախսում է 20,6 ժամ՝ 8,6 ժամի փոխարեն:

Եզրակացություն. Պրոբլեմային ուսուցումն այսօր հասարակական պահանջ է, ուստի պրոբլեմային իրավիճակների ստեղծման որոշակի եղանակներ և կանոններ պետք է մշակվեն՝ ըստ առարկաների, ըստ տվյալ առարկայի տարբեր բաժինների, ըստ բարդ թեմաների, պետք է հստակեցվեն այս ուսուցման տարատեսակները, աստիճաններն ու առանձնահատկությունները՝ ըստ տարիքային խմբերի, ըստ ուսուցման նպատակների և այլն: Անելիքները բազմաթիվ ու բազմազան են:

Անհերքելի է, որ նոր ժամանակները պահանջում են ուսուցման նոր մեթոդների ու դրանք իրականացնելու նոր միջոցների որոնումներ, այնուհետև՝ դրանց գործադրում՝ նոր պահանջներին համապատասխան: Սակայն, մեր կարծիքով, ուսուցման ոչ մի նոր համակարգ, ոչ մի նոր մեթոդ չի բացառում ավանդական ձևերի ու մեթոդների տարրերը, որքան էլ որ այդ նորը բավարարի ժամանակակից պահանջները կամ լինի առաջադեմ ու կատարյալ:

Նորը հենց այնպես չի կարող հայտնվել. արդյունավետ է, երբ այն կառուցվում է ավանդականի հենքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Кудрявцев Т.В.** Проблемное обучение: истоки, сущность, перспективы. - М., 1991.- 80 с.
2. **Матюшкин А.М.** Проблемные ситуации в мышлении и обучении. – М., 2004. – 48 с.
3. **Лернер И.Я.** Проблемное обучение. – М., 2004. – 131 с.
4. **Оконь В.** Основы проблемного обучения. – М., 1968.-208 с.
5. **Махмутов М.И.** Проблемное обучение. - М., 2005. – 14 с.
Махмутов М.И. Организация проблемного обучения.- М., 1977. -240 с.
6. **Скаткин М.Н.** Проблемы современной дидактики.- М., 1984.- 95 с.
7. **Брушлинский А.В.** Психология мышления и проблемное обучение. -М., 1983. - 96 с.
8. **Хуторской А.В.** Дидактическая эвристика. Теория и технология креативного обучения. -М., 2003. - 416 с.
9. **Кулюткин Ю.Н.** Эвристические методы в структуре решений.–М., 2009.–156 с.
10. **Ильницкая Н.А.** Проблемные ситуации как средство активизации мыслительной деятельности учащихся на уроке.- Пермь, 1985.- 80 с.
11. **Ամիրջանյան Յու.** Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ.- Ե., 1975.- 138 էջ:
12. **Խաչատրյան Պ.Գ.** Հայոց լեզվի մեթոդիկայի ժամանակակից հարցեր.- Ե., 1988.- 142 էջ:
13. **Бодалев А.А., Васина Н.В.** Акмеология. Настоящий человек. Каков он и как им становятся? – СПб.: Речь, 2010. – 224 с.
14. **Деркач А.А.** Акмеология. Личностное и профессиональное развитие человека.- М., 2000.- 298 с.

Ա.Տ. ՄԱՐՏԻՐՕՍՅԱՆ
ПРОБЛЕМНОЕ ОБУЧЕНИЕ – НОВЫЙ ИЛИ ОБНОВЛЕННЫЙ
МЕТОД?

Представлены суть и важность проблемного обучения в современной системе образования.

В традиционных методах обучения и параллельно им обосновывается его продолжительное применение с новыми составляющими.

Ключевые слова: проблемное обучение, самообразование, целенаправленное и мотивирующее обучение.

A.T. MARTIROSYAN
PROBLEMATIC TEACHING: A NEW OR INNOVATED METHOD?

The essence and importance of problematic teaching in the modern education system has been introduced. Its continuous application with new component-elements has been substantiated within and parallel to traditional teaching methods.

Keywords: problem teaching, self-education, intentional/targeted and purposeful education.

ՀՏԴ 796/799

Ա.Ա. ՂՈՉԻԿՅԱՆ, Խ.Ա. ՍԱՆՈՍՅԱՆ

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ**

Վերլուծվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված 6 - 60 տարեկան բնակչության ֆիզիկական պատրաստության գնահատման 10-սանդղականոց համակարգի նախագիծը: Բնակչության ֆիզիկական պատրաստության գնահատման նորմերը համապատասխանում են տարիքային խմբերին և ապահովում դրանց գնահատման փոխկապակցվածությունը: Նախագծի հեղինակները ներկայացրել են տարիների ընթացքում կուտակված և գիտականորեն հիմնավորված համակարգ: Համակարգի փորձարկումը վկայում է, որ այն համապատասխանում է բնակչության ֆիզիկական պատրաստության և գնահատման բարելավմանը և պետք է ստանա օրենքի ուժ:

Առանցքային բաներ. բնակչություն, ֆիզիկական պատրաստության գնահատում, նորմեր, 10-սանդղականոց համակարգ:

Ներածություն. ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 24-ի N 36 արձանագրության N 2 որոշմամբ հաստատվել է 6 - 60 տարեկան բնակչության ֆիզիկական պատրաստության գնահատման 10-սանդղականոց համակարգը: Ամեն